ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

10-րդ դասարան

1.Կանաչ հովտի հրաշալի ասքը պատմում է այդ հովտի հրաշալի բնակիչների կենսագիրը՝փոքրիկ հովիվը, ով իրականում հեղինակի՝ Ծմակուտի քուրմի «կրկնորդն էր»(Ս. Աղաբաբյան), ասել է թե ինքը՝ Հրանտ Մաթևոսյանը: Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» «կանաչ հովտի մայրամուտի ու շարունակելիության» պատմությունն է: Պատմվածքն սկսվում է հովտի գեղեցիկ նկարագրությամբ՝ կայծակի՝ ճայթյունով ժայռին բախվելուց ու գետնի մեջ խրվելուց, իսկ գետինը այդ հովտում ճայթող բոլոր կայծակների գերեզմանն էր, ժայռը պաշտպանում էր կաղնուն, փրկում խանձվելուց, կաղնին կաղնիորեն շնորհակալ է, մայր ձին զգում էր կայծակի մոտալուտ ճայթյունը և դրա հետ եկող վտանգի հոտը: Միամսյա քուռակի կյանքում դա առաջին կայծակն էր, առաջին անհասկանալի վտանգը, և նա սկսեց ծծել մոր կաթը: Աստղածաղիկ ճակատով քուռակի աչքերում արտացոլվում էին կաղնին, ծաղիկները, մասրենին, իր կարմիր մայրը և ամբողջ կանաչ հովիտը, և նա անտեղյակ էր հովտում տարածվող վտանգի հոտին:«Իսկ կարմիր պառավ ձին զայրանում էր, որ հովտում թշնամի կար, բայց չէր երևում: Հովիտը դավաճանում էր ձիուն, հովտում թշնամի կար, բայց հովիտը չէր մատնում թշնամու ձայնը»: Շուտով հայտնվում է թշնամին՝ սոված ձագերի համար կեր փնտրող մայր գայլը, և գայլը մեղք չուներ, նա չպետք է դատարկ վերադառնար ձագերի մոտ: Եվ հրաշալի հակադրություններով նկարագրվում է կարմիր ձիու և գորշ գայլի անհաշտ մենամարտը, ձիու պարտությունը և մահը, շների ուշացած օգնությունը, գայլի հետ կատաղած կռիվը, գայլի գետնաքարշ փախուստը, դատարկաձեռն ու բզկտված վերադարձը:Հովտում մնում է սև շրջանակը՝ կարմիր ձիու մեռած մարմնով, հեռացող շների ոռնոցով, փախչող գայլի հետքերով: Իսկ աստղազարդ քուռակն ասես արդեն հասկանում էր կատարվածը: Ծեր հովիվը փոքրիկ հովվին պատմում է այս հրաշալի ասքը, իսկ հովտում արածում է աստղածաղիկ ճակատով ձին, նրա աչքերում արտացոլվում են « ժայռը, կաղնին, ծաղկած մասրենին, կանաչ հոցիտը և կապույտ երկնքի սպիտակ ամպերը»: Կանաչ հովիտը սահմանում է կյանքի վերածնունդը, բնության բոլոր էակների ապրելու իրավունքը, կյանքի անսկիզբ ու անվախճան հեքիաթը: Կարմիր պառավ ձին մեղմ խրխինջով հայտնում է իր տեղը կանաչ դաշտում արածող աստղազարդ ձիուն: Հովտի սև շրջանակը լցվել է ծաղկառատ կանաչով,և հովիտը դարձյալ լցվում է կայծակներով, օտար ձայներով, սպասումներով: Կյանքը հովտում շարունակվում է:

Հրանտ Մաթևոսյանը գրականություն մտավ միանգամից՝ բերելով բոլորովին նոր շունչ ու նոր աշխարհ: Այդ աշխարհը կոչեց Ծմակուտ և դարձավ այդ նախնականորեն գեղեցիկ աշխարհի ասացողն ու խնկարկուն: Մաթևոսյանի հերոսները գրական նախատիպեր չունեն, նրանք երկրի պատմությունը կերտող իր

համագյուղացիներն են, իսկ «Ծմակուտը մարդկանց, կենդանիների ու բույսերի ոստայն է, օջախ ու հայրենիք»։ (Ֆ. Մելոյան)։

2. Հայ ժողովրդի լուսավոր հանճարներից է հայ նոր գրականության հիմնադիր, մեծ դեմոկրատ, լուսավորիչ, մանկավարժ Խաչատուր Աբովյանը, ում մեծարել են մեծ քանաքեռցի, Հայաստանի վերքի երգիչ պատվանուններով։ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը հայ նոր գրականության հիմնաքարն է, աշխարհաբարով գրված առաջին վեպը։ Այն ունի չափազանց խոսուն ենթավերնագիր՝«Ողբ հայրենասիրի»։ Ո՞րն էր Հայաստանի վերքը և ի՞նչն էր ողբում նրա նվիրյալ զավակը։ Այդ վերքը միայն իր ապրած ժամանակին չէր վերաբերում։ Այն ուներ դարավոր պատմություն, այդ վերքը դարեր շարունակ պետականությունից ու ազատությունից զրկված հայրենիքի վերքն է, որի համար ողբում է հայրենասեր զավակը, այդ վերքը հայ մանկան՝ իր ժողովրդի հերոսական անցյալի չիմացությունն է, լեզվի անմատչելիությունը, անթիվ նվաճողների լծի տակ հեծող ժողովրդի ստրկական վիճակը։Այդ վերքը՝բռնակալներից կրած հալածանքները, կեղեքումները, ոճիրներն էին և ժողովրդի գլխին վերստին փայլատակած պարսկական թուրն էր, նոր տիրապետողի՝ ռուսական կայսրության ավելի կտրուկ թուրը՝ ցարիզմի այլասերող վտանգը, և խոսեց նրա հրեղեն լեզուն, «էդ ում վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»։ Այդ լեզուն «Վերք Հայաստանին էր», «Ողբ հայրենասիրին»,«Ինչպես 1840-ին դարերով լռած Մասիսը պոռթկաց կրակ ու բոց, և հեղեղեց, և շարժեց Հայոց աշխարհը բովանդակ , այնպես էլ Աբովյանի մեծ սիրտը…հեղեղեց և կրակ ու բոց որոտաց և ցույց տվեց թրկության ուղին՝ հայ ժողովրդի ազատագրման- անկախության ուղին՝՝ անձնազոհ հայրենասիրություն, սխրալի, հերոսական քաջագործություն»։(Ավ. Իսահակյան)։ Եվ այդ սխրանքը իրականացրեց հասարակ ժողովրդի ծոցից ելած Աղասին, որ«իր կապուտակ ձիով՝ դոփելով, փայլատակելով ու զրնգալով , քառասմբակ անցել է հայ ժողովրդի հոգու միջով»։(Ավ, Իսահակյան)։ Ահա Աբովյանի նկարագրած Աղասին.«Նրա սուրահի բոյը, նրա թուխ- թուխ աչքերը, նրա ղալամով քաշած ունքերը, նրա աննման պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր լեզուն, լեն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկեթել ճալվերը մարդի խելք էին տանում»։ Ահա այս անձնուրաց կտրիճն է և նրա նմանները, որ պետք է բուժեն հայրենիքի՝ Աբովյանին ու մեզ տանջող ցավերը։
«Զարմանալի՜, անհունորե՜ն զարմանալի հրաշք- երևույթ է«Վերք Հայաստանին»»։ Հենց այս հրաշք երևույթի հեղինակին ու իր գործն է անմահացրել Աբովյանի հանճարով հիացած մի ուրիշ հանճար՝ Եղիշե Չարենցը, իր «Դեպի լյառն Մասիս» պոեմում.

- Եվ այժմ մենավոր նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ,
  Դեպի լյառը անհաս ու վեհանիստ,- Դեպի գագաթը բարձր,
  Որ իր ժողովուրդը համարել է հավետ իր գոյության խորհուրդը,-
  Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ…

3. Հայ գրականության բազմադարյան երթում իր անբեկանելի տեղն ունի մեծանուն վիպասան Մուրացանը: Նրա ստեղծագործությունները անգնահատելի զենքեր էին 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի ազգային- ազատագրական պայքարի կազմակերպման գործում: Մուրացանը ծնվել է պատմական Շուշիում, որը Արցախ աշխարհի քաղաքական և մշակութային կենտրոնն էր, որտեղ ապրում ու ստեղծագործում էին ազնիվ աշխատավոր մարդիկ: Ահա այդպիսի մի ազնիվ հողագործի ընտանիքում է ծնվել ապագա մեծ վիպասանը: Նրա մանկությունն անցել է հյութական ու հոգևոր բարենպաստ պայմաններում. նրա հայրը հողագործ էր, գիտեր մի քանի արհեստներ, օժտված էր երգելու և բանաստեղծելու ձիրքով, մայրը ուսման հարգն իմացող բարեպաշտ կինն էր: Փոքրիկ Գրիգոր Տեր- Հովհաննիսյանը ընդունվում է Շուշիի մասնավոր դպրոց, բայց վրա հասած դժբախտության պատճառով(մահանում է հայրը), ընտանիքն ընկնում է հյութական վատ վիճակի մեջ, և գրիգորը տեղափոխվում է ավելի էժանագին դպրոց, այնուհետև՝ Շուշիի թեմական դպրոց և այն ավարտում լեզուների հիմնավոր իմացությամբ: Դպրոցն ավարտելուց հետո ուսուցչություն է անում՝ դասավանդելով հայոց լեզու և պատմություն: Նա խորապես ուսումնասիրում է հայոց պատմությունը. այնտեղ հանդիպում է հին Հայաստանի նախարարական մի տոհմի՝ Մուրացյան, Մարացյան կամ Մուրացան անունով: Անչափ հրապուրվում է այդ անունով ու իր առաջին գործը՝«Ռուզան» պատմական դրաման ստորագրում է Մուրացան: Դրաման շռնդալից հաջողություն է ունենում ,և այդ անունը մեկընդմիշտ դառնում է գրողի մականունը: Բազմաժանր հեղինակ է Մուրացանը, բայց նրա գլուխգործոցը «Գևորգ Մարզպետունի» հրաշալի հյուսվածքով պատմավեպն է, որը նա գրել է 1895-96 թվականների հայկական ջարդերի և ռուսական կայսրության հայահալած քաղաքականության անմիջական տպավորությունների ազդեցությամբ: Պատկերված են 10-րդ դարի իրադարձությունները, երբ Հայաստանը հեծում էր արաբական տիրապետության տակ, բայց կարողացավ վերագտնել իր ազատությունը հայրենասեր իշխանների, թագավորի և ժողովրդի միաբանության շնորհիվ: Գրողը հայրենասիրության սքանչելի դաս էր տալիս ժամանակի երիտասարդությանն ու ժողովրդին: Վիպասանն օգտվել է 10-րդ դարի պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցու«Պատմություն հայոց» և Թովմա Արծրունու«Պատմություն տանն Արծրույաց» գրքերից, որոնք այնքան էլ հարուստ տեղեկություն չեն տալիս պատմավեպի հերոսների մասիմ: Դրասխանակերտցին գրում է , որ «Գևորգ անունով մեկը իր քսան քաջերով կռվում է արաբ զորավար Բեշիրի դեմ և հալածում թշնամանական զորքը», պատմիչն այնուհետև նշում է, որ «Աշոտ Երկաթը հաճախ է լինում Ուտյաց աշխարհում և ուներ բարոյական թերություն»: Այս ժլատ տեղեկություններով վիպասանը կերտում է հիանալի կերպարներ և դժբախտ սիրո մի հուզիչ պատմություն, որ ճակատագրական է լինում թե՛ թագավորի, թե՛ սեպուհ Ցլիկ Ամրամի, թե՛ բոլորովին հորինված ամենառողբերգական կերպարի՝ Ասպրամի համար: Մուրացանի կենսագրության մեջ կա նման մի դրվագ. նրա սիրեցյալ կինը՝ Ոսկեհատ Տեր- Հովհաննիսյանը, լքում է գրողին և երեխաների հետ հեռանում Գերմանիա՝ «Նոր դար»-ի խմբագիր Սպանդար

Սպանդարյանի հետ: Սա խոցում է գրողին, նրան հասցնում անբուժելի հիվանդության: Ցլիկ Ամրամի զգացմունքներն ամբողջովին ապրել է գրողը: Ասպրամի կերպարը , և անգամ անունը, գրողի երևակայության արդյունքն են, նրա անբուժելի ցավի շոշափելիորեն կենդանի արտահայտությունը: Առհասարակ Մուրացանը նուրբ ու զգայուն հոգեբան է: Նրա հերոսների տառապանքը(Աշոտ Երկաթ, Ցլիկ Ամրամ, Ասպրամ, Սահականույշ) ապրված զգացումների ճշմարիտ արտահայտություն են:
Ցլիկ Ամրամը խորապես ողբերգական կերպար է: Նրա հոգում կռվում են հայրենասեր զորականն ու նվաստացած ու խաբված տղամարդը: Նա սիրում է իր հայրենիքը, անմնացորդ նվիրվել է այդ հայրենիքի ազատագրությանը, հավատարմորեն ծառայել է հայոց արքային, բայց դառնանում է նրա կյանքը: Հայոց արքան խլել է նրա երջանկությունը, գողացել է նրա սերը, անարգել է պատիվը, և քաջ զորականը «փլվել» է: Նա չի կարող ներել դավաճանությունը, քանի որ «կույր աչքը կարող է ներել, կույր սիրտը չի ներիլ»: Նա պահանջում է անկարելին.«Վերդարձրեք ինձ այն, ինչ որ Աշոտը խլեց ինձանից: Վերադարձրեք ինձ իմ Ասպրամին, իմ պատիվը: Կարո՞ք եք այդ անել, տեր Մարզպետունի»: Նա ինքն է պատժել իր պաշտելի կնոջը: Խանդն այստեղ քիչ դեր ունի. խոցված է նրա տղամարդկային արժանապատվությունը, կողոպտված է նրա հոգին, բզկտված է խիղճը ,և իր պաշտելի ամրոցում ապրելն անհնար է, անկարելի: Եվ նա ՝ այդ անպարտելի ու հզոր մարդը, կատարում է անթույլատրելին. վաճառում է միակ չվաճառվողը, բայց , իհարկե, համոզված ենք, որ դա նրան չի փրկում, իսկ արդարացնու՞մ է, պատասխանի՛ր ինքդ, սիրելի՛ մասնակից:

4. Նշված բոլոր ստեղծագործություններին դու ծանոթ ես քո դպրոցական ծրագրից, ուստի դժվարության չպետք է հանդիպես: Նշի՛ր հեղինակներին և վերլուծի՛ր քո նախընտրած գործը:
«Հայոց լեռներում»՝ Հովհաննես Թումանյան, «Հայրենի տուն»՝ Նաիրի Զարյան, «Ազատություն, «Մանկության օրեր»՝ Միքայել Նալբանդյան, «Արաքսի արտասուքը»՝ Ռափայել Պատկանյան, «Իմ ցավը»՝ Պետրոս Դուրյան, «Ես իմ անուշ Հայաստանի»՝ Եղիշե Չարենց, «Մի՞թե վերջին պոետն եմ ես», «Գարնանամուտ»՝ Վահան Տերյան, «Ավելորդը»՝ Դերենիկ Դեմիրճյան, «Սպիտակ ձին»՝ Ակսել Բակունց:

Վերլուծե՛լ բնագրային հղումներով:

Գնահատման չափանիշներ

10-րդ դասարան

1 հարց՝
ենթահարցեր՝ 1- 1 մ., 2-1 մ., 3-4 մ., 4-1 մ., 5-1 մ., 6-1 մ., 7-1 մ.,

2 հարց՝
ենթահարցեր՝ 1- 1 մ., 2-2 մ., 3-2 մ., 4-2 մ. 5-2 մ., 6-1 մ.,

3 հարց՝
ենթահարցեր՝ 1- 1 մ., 2-1 մ., 3-1 մ., 4-1 մ. 5-2 մ., 6-1 մ., 7-3 մ.,

4 հարց՝
ենթահարցեր՝ 1- 5 մ., 2-5 մ.:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան